# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/41 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 2 | «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ» ՄԵԴԱԼ «Քրեակատարողական ծառայության հոբելյանական» մեդալը պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից, փայլատ տեխնոլոգիայով և արտադրվում է դրոշմման ճանապարհով և բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված շրջանագծից: Կախիչը ձևով նման է «Վաստակի համար» մեդալի կախիչի ձևին, բացառությամբ՝ պաստառապատված է 24 մմ լայնություն ունեցող մուգ կարմիր մետաքսյա ժապավենով, որի աջ և ձախ եզրերով վերից վար անցնում է 4 մմ լայնությամբ արծաթագույն շերտագիծ: Շրջանագիծն անփայլ, անհարթ ու արծաթագույն է և ունի 32 մմ տրամագիծ ու 2 մմ հաստություն: Շրջանագծին զուգահեռ՝ վերևի մասում 0,5 մմ հաստությամբ ոսկեգույն գրվում է «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը, իսկ ներքևի մասում՝ «ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ» բառը: Շրջանագիծն ունի 1 մմ լայնությամբ և 0.5 մմ հաստությամբ եզրագիծ: Շրջանագծի կենտրոնում պատկերված է վահան: Վահանը ոսկեգույն է և ունի 1 մմ հաստություն, արծաթագույն թուր՝ վահանի կենտրոնում ամբողջ երկայնքով, որը վահանի վերին եզրից դուրս է գալիս 1.5 մմ չափի հավերժության նշանով, վերին կենտրոնական մասում 0,5 մմ հաստությամբ Հայաստանի Հանրապետության զինանշանը, որից ներքև 0,5 մմ հաստությամբ պատկերվում է Հայաստանի Հանրապետության ծածանվող դրոշը, որը արծնապատված է եռագույն և 0,5 մմ հաստությամբ ոսկեգույն կշեռք, որի հիմքը սկսվում է վահանի վերին եզրերից, իսկ թևերը տարածվում են վահանի կենտրոնական մասում և յուրաքանչյուր կողմից դուրս գալիս եզրագծերից: Վահանի ներքևի մասում պատկերված է 0,5 մմ հաստությամբ ոսկեգույն ցորենի հասկեր: Վահանի ձախ և աջ կողմերում՝ շրջանագծի վրա 0,5 մմ |

| | |
|---|---|
| | հաստությամբ և 2 մմ տրամագծով պատկերված է շրջան, իսկ շրջանագծի կենտրոնից՝ սկսած վահանի կողմերից տարածվում են ճառագայթներ։ Շրջանագծի հակառակ երեսին փորագրվում է մեդալի հերթական համարը։ Մեդալի շերտաձողիկի չափերն են՝ 24x12 մմ։ Շերտաձողիկի ժապավենն ունի կախիչի ժապավենի գունային նկարագիրը։ Պատրաստված մեդալի նմուշը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ։ Մեդալների և վկայականների նկարագրերը համաձայն՝ ՀՀ փոխվարչապետի 11.09.2020թ.-ի թիվ 555-Լ որոշման հավելված՝ 4-ի։ Յուրաքանչյուր մեդալը պետք է դրված լինի թավշապատ, տեղակայելու հարթակով համապատասխան չափի տուփի մեջ և իր հետ ունենա վկայական։ Տուփերի ձևերը նախօրոք համաձայնեցնել Պատվիրատույի հետ։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 2 | |